

**«Միջազգային արեւային դաշինքի (ՄԱԴ) հիմնադրման մասին»
շրջանակային համաձայնագիր**

Մենք՝ սույն Համաձայնագրի Կողմերս,

վկայակոչելով 2015 թվականի նոյեմբերի 30-ի Միջազգային արեային դաշինքի մասին Փարիզի հոչակագիրը եւ ֆինանսական ու տեխնոլոգիական ծախսերը նվազեցնելու, արեային էներգիայի զանգվածային օգտագործման համար մինչեւ 2030 թվականն անհրաժեշտ ավելի քան 1000 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ ներդրումները մոբիլիզացնելու եւ կարիքներին հարմարեցված ապագա տեխնոլոգիաների համար ճանապարհի հարթելու համար պահանջվող համատեղ ջանքեր գործադրելու ընդհանուր մղումը,

գիտակցելով, որ արեային էներգիան երկրներին տալիս է իրենց ժողովուրդներին բարգավաճում, էներգետիկ անվտանգություն եւ կայուն զարգացում ապահովելու աննախադեպ հնարավորություն,

ընդունելով այն կոնկրետ եւ ընդհանուր խոչընդոտները, որոնք դեռեւս ծառայած են այս երկրներում արեային էներգիայի կիրառության դեպքերի արագ եւ զանգվածային մեծացման ճանապարհին,

հաստատելով, որ այս խոչընդոտները կարող են հաղթահարվել, եթե արեային ռեսուրսներով հարուստ երկրները գործեն համակարգված ձեւով, ուժեղ քաղաքական մղումներով եւ վճռականությամբ, եւ որ, *ի թիվս այլնի*, տարբեր երկրներում արեային ֆինանսների, տեխնոլոգիաների, նորարարությունների կամ կարողությունների զարգացման պահանջարկի ավելի լավ ներդաշնակեցումը եւ համախմբումը հզոր լծակ կապահովեն ծախսերը նվազեցնելու, որակը բարելավելու եւ հուսալի ու մատչելի արեային էներգիան բոլորին հասանելի դարձնելու համար,

միավորված լինելով մեր միջեւ համակարգման եւ որոշումների կայացման արդյունավետ մեխանիզմ ստեղծելու ցանկությամբ,

համաձայնեցինք հետեւյալի մասին.

Հոդված I

Նպատակը

Կողմերը սույնով ստեղծում են Միջազգային արեային դաշինք (այսուհետ՝ ՄԱԴ), որի միջոցով նրանք միասին կդիմակայեն իրենց կարիքներին համապատասխան արեային էներգիայի ընդլայնման հիմնական ընդհանուր մարտահրավերներին:

Հոդված II

Հիմնարար սկզբունքներ

1. Անդամները համակարգված գործողություններ են իրականացնում կամավոր հիմունքներով մեկնարկած Ծրագրերի եւ գործունեության միջոցով, որոնք ուղղված են, *ի թիվս այլնի*, արեւային ֆինանսների, արեւային տեխնոլոգիաների, նորարարությունների, ուսումնասիրությունների եւ զարգացման, ինչպես նաեւ կարողությունների զարգացման պահանջարկի ավելի լավ ներդաշնակեցմանն ու համախմբմանը:

2. Այս նպատակով Անդամները սերտորեն համագործակցում են եւ ձգտում փոխշահավետ հարաբերություններ հաստատել համապատասխան կազմակերպությունների, պետական եւ մասնավոր շահագրգիռ կողմերի եւ ոչ անդամ երկրների հետ:

3. Յուրաքանչյուր Անդամ այն արեւային հավելվածների համար, որոնց հետ կապված՝ նա օգուտ է ակնկալում ՄԱԴ-ի շրջանակներում կոլեկտիվ գործողությունների արդյունքում, ինչպես նաեւ հիմնվելով արեւային հավելվածների ընդհանուր վերլուծական քարտեզագրման վրա, տրամադրում եւ թարմացնում է համապատասխան տեղեկություններ՝ իր կարիքների եւ նպատակների, այդ նպատակներին հասնելու համար ձեռնարկված կամ ձեռնարկվելիք ներպետական միջոցառումների ու նախաձեռնությունների, արժեշղթայի եւ տարածման գործընթացում առկա խոչընդոտների վերաբերյալ: Քարտուղարությունը վարում է այս գնահատումների տվյալների բազա՝ համագործակցության ներուժն ընդգծելու նպատակով:

4. Յուրաքանչյուր Անդամ ՄԱԴ-ի համար նշանակում է ազգային համակարգող մարմին: Ազգային համակարգող մարմիններն իրենցից ներկայացնում են Անդամ երկրներում ՄԱԴ-ի թղթակիցների մշտական ցանց: Նրանք, *ի թիվս այլնի*, փոխգործակցում են միմյանց, ինչպես նաեւ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի բացահայտեն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտները, մշակեն Ծրագրերի հետ կապված առաջարկներ եւ Քարտուղարությանը ներկայացնեն ՄԱԴ-ի նպատակների իրականացման վերաբերյալ առաջարկներ:

Հոդված III

Ծրագրերը եւ այլ աշխատանքներ

1. ՄԱԴ-ի Ծրագիրը բաղկացած է մի շարք գործողություններից, նախագծերից եւ աշխատանքներից, որոնք պետք է համակարգված ձեռով իրականացվեն Անդամների կողմից՝ Քարտուղարության աջակցությամբ՝ I եւ II հոդվածներում նկարագրված նպատակն ու հիմնարար սկզբունքներն իրականացնելու համար: Ծրագրերը

նախագծված են այնպես, որ ապահովեն առավելագույն մասշտաբի ազդեցություն եւ հնարավորինս մեծ թվով Անդամների մասնակցություն: Դրանք ներառում են պարզ, չափելի, մոբիլիզացնող թիրախներ:

2. Ծրագրի հետ կապված առաջարկները մշակվում են Ազգային համակարգող բոլոր մարմինների միջեւ բաց խորհրդակցությունների միջոցով՝ Քարտուղարության աջակցությամբ եւ Անդամների կողմից տրամադրվող տեղեկությունների հիման վրա: Ծրագիրը կարող է առաջարկվել ցանկացած երկու Անդամի կամ Անդամների խմբի կամ Քարտուղարության կողմից: Քարտուղարությունն ապահովում է ՄԱԴ-ի բոլոր Ծրագրերի համահունչությունը:

3. Քարտուղարությունը Ծրագրի հետ կապված առաջարկները թվային շրջանառության միջոցով փոխանցում է Ժողովին՝ Ազգային համակարգող մարմինների ցանցի միջոցով: Ծրագրի հետ կապված առաջարկը համարվում է բաց՝ ցանկացող Անդամների կողմից միանալու համար, եթե առնվազն երկու Անդամ աջակցում է դրան, եւ եթե առարկություններ չեն հնչում ավելի քան երկու երկրների կողմից:

4. Ծրագրի հետ կապված առաջարկը պաշտոնապես հաստատվում է դրան միանալու ցանկություն ունեցող Անդամների կողմից՝ համատեղ հայտարարության միջոցով: Ծրագրի իրականացման հետ կապված բոլոր որոշումներն ընդունվում են Ծրագրին մասնակցող Անդամների կողմից: Դրանք իրականացվում են Քարտուղարության ղեկավարությամբ եւ աջակցությամբ՝ յուրաքանչյուր Անդամի կողմից նշանակված երկրների ներկայացուցիչների կողմից:

5. Տարեկան աշխատանքային պլանում համառոտ ձեով ներկայացվում են Ծրագրերը եւ ՄԱԴ-ի այլ աշխատանքներ: Քարտուղարությունն այն ներկայացնում է Ժողովին, որն ապահովում է, որ տարեկան աշխատանքային պլանի բոլոր Ծրագրերն ու աշխատանքները համապատասխանեն ՄԱԴ-ի ընդհանուր նպատակին:

Հոդված IV

Ժողովը

1. Սույն Համաձայնագրի իրականացման եւ դրա նպատակին հասնելու համար ձեռնարկվելիք համակարգված գործողությունների վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով Կողմերը սույնով ստեղծում են Ժողով, որտեղ ներկայացված է յուրաքանչյուր Անդամ: Ժողովն ամեն տարի նախարարների մակարդակով հանդիպում է ՄԱԴ-ի նստավայրում: Ժողովը կարող է հանդիպում կազմակերպել նաեւ հատուկ հանգամանքներում:

2. Ժողովի միջանկյալ նիստերն անցկացվում են նախարարների մակարդակով

Ծրագրերը քննարկելու եւ դրանց հետագա իրականացման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով՝ III հոդվածի 4-րդ կետի իրականացման համար:

3. Ժողովը գնահատում է ՄԱԴ-ի շրջանակներում իրականացվող Ծրագրերի եւ այլ գործունեության ընդհանուր ազդեցությունը, մասնավորապես՝ արեւային էներգիայի օգտագործման, կատարողականի, հուսալիության, ինչպես նաեւ ծախսերի եւ ֆինանսների մասշտաբների մասով: Հիմնվելով այս գնահատման վրա՝ Անդամները կայացնում են ՄԱԴ-ի նպատակի հետագա իրականացման հետ կապված անհրաժեշտ բոլոր որոշումները:

4. Ժողովն ընդունում է ՄԱԴ-ի գործարկման հետ կապված անհրաժեշտ բոլոր որոշումները, ներառյալ՝ Գլխավոր տնօրենի ընտրությունը եւ ընթացիկ բյուջեի հաստատումը:

5. Յուրաքանչյուր Անդամ Ժողովում ունի մեկ ձայն: Դիտորդները եւ գործընկեր կազմակերպությունները կարող են մասնակցել՝ առանց քվեարկության իրավունք ունենալու: Ընթացակարգային հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են ներկա եւ քվեարկող Անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Էական հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են ներկա եւ քվեարկող Անդամների երկու երրորդի մեծամասնությամբ: Հատուկ Ծրագրերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են այս Ծրագրին մասնակցող Անդամների կողմից:

6. 2015 թվականի նոյեմբերի 30-ի՝ Միջազգային արեւային դաշինքի մասին Փարիզի հռչակագրով ստեղծված ՄԱԴ-ի Միջազգային Ղեկավար կոմիտեի կողմից ընդունված բոլոր որոշումները ներկայացվում են Ժողով՝ վերջինիս կողմից ընդունման համար, նրա առաջին հանդիպման ժամանակ:

Հոդված V

Քարտուղարությունը

1. Կողմերը սույնով ստեղծում են Քարտուղարություն՝ սույն Համաձայնագրի շրջանակներում նրանց կոլեկտիվ աշխատանքին աջակցելու համար: Քարտուղարությունը բաղկացած է Գլխավոր տնօրենից, որը գլխավոր գործադիր տնօրենն է, եւ անհրաժեշտության դեպքում՝ այլ անձնակազմից:

2. Գլխավոր տնօրենն ընտրվում է Ժողովի կողմից եւ պատասխանատու է նրա առաջ. նա պաշտոնավարում է չորս տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել եւս մեկ ժամկետով:

3. Գլխավոր տնօրենը Ժողովի առաջ պատասխանատու է անձնակազմի

նշանակման, Քարտուղարության կազմակերպչական եւ գործունեությանն առնչվող հարցերի, ինչպես նաեւ ռեսուրսների մոբիլիզացման համար:

4. Քարտուղարությունը նախապատրաստում է ժողովի գործողությունների համար հիմք հանդիսացող հարցերը եւ իրականացնում է ժողովի կողմից իրեն վստահված որոշումները: Այն ապահովում է, որ համապատասխան քայլեր ձեռնարկվեն ժողովի որոշումներին հետեւելու եւ այդ որոշումների իրականացման ընթացքում Անդամների գործողությունները համակարգելու համար: Քարտուղարությունը, *ի թիվս այլնի՝*

ա) օժանդակում է Ազգային համակարգող մարմիններին՝ ժողովին ներկայացված Ծրագրերի հետ կապված առաջարկների եւ առաջարկությունների նախապատրաստման հարցում.

բ) Անդամներին ուղղորդում է եւ տրամադրում աջակցություն յուրաքանչյուր Ծրագրի իրականացման, այդ թվում՝ միջոցների ներգրավման հարցում.

գ) հանդես է գալիս ժողովի անունից կամ որոշակի Ծրագրին մասնակցող Անդամների խմբի անունից, երբ նրանք այդպես են պահանջում. եւ մասնավորապես կապեր է հաստատում համապատասխան շահագրգիռ կողմերի հետ.

դ) սահմանում եւ գործի է դնում կապի բոլոր միջոցները, գործիքները եւ միջոլորտային գործունեությունը, որոնք անհրաժեշտ են ՄԱԴ-ի եւ դրա Ծրագրերի գործունեության համար, ինչպես հաստատված է ժողովի կողմից:

Հոդված VI

Բյուջեն եւ ֆինանսական ռեսուրսները

1. Քարտուղարության եւ ժողովի գործառնական ծախսերը, ինչպես նաեւ օժանդակ գործառույթների եւ միջոլորտային գործունեության հետ կապված բոլոր ծախսերը կազմում են ՄԱԴ-ի բյուջեն: Դրանք ծածկվում են՝

ա) իր Անդամների, ՄԱԿ-ի եւ նրա գործակալությունների եւ այլ երկրների կողմից կամավոր ներդրումների.

բ) Մասնավոր հատվածի կողմից կամավոր ներդրումների հաշվին: Շահերի հնարավոր բախման դեպքում Քարտուղարությունը հարցն ուղարկում է ժողովին՝ ներդրումների ընդունման հարցը հաստատելու համար.

գ) ժողովի կողմից հաստատված կոնկրետ գործունեությունից գոյացող եկամուտների հաշվին:

2. Քարտուղարությունը ժողով է ներկայացնում Հիմնական ֆոնդ ստեղծելու եւ այն ընդլայնելու վերաբերյալ առաջարկներ, որը եկամուտներ կգեներացնի ՄԱԴ-ի բյուջեի համար՝ նախնական 16 միլիոն ԱՄՆ դոլար նվիրաբերությամբ:

3. Հնդկաստանի կառավարությունը 27 միլիոն ԱՄՆ դոլար կներդնի ՄԱԴ-ի հիմնական կապիտալի ստեղծման, ենթակառուցվածքների կառուցման եւ շարունակական ծախսերի համար՝ 2016-17-ից մինչեւ 2020-21 թվականներին՝ 5 տարվա ընթացքում: Բացի այդ, Հնդկաստանի կառավարության պետական հատվածի ձեռնարկությունները, մասնավորապես՝ Հնդկաստանի Արեւային էներգիայի կորպորացիան (ՀԱԷԿ) եւ Հնդկական վերականգնվող էներգիայի զարգացման գործակալությունը (ՀՎԷԶԳ), յուրաքանչյուրը 1 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում են կատարել ՄԱԴ-ի հիմնական ֆոնդի ստեղծման համար:

4. Հատուկ Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները, բացառությամբ ընդհանուր բյուջեի շրջանակներում նախատեսված վարչական ծախսերի, գնահատվում եւ մոբիլիզացվում են սույն Ծրագրին մասնակցող երկրների կողմից՝ Քարտուղարության օժանդակությամբ եւ աջակցությամբ:

5. ՄԱԴ-ի ֆինանսական եւ վարչարարական գործունեությունը, բացի Ծրագրերից, կարող է փոխանցվել մեկ այլ կազմակերպության՝ ժողովի կողմից հաստատման ենթակա առանձին համաձայնագրի համաձայն:

6. Ժողովի կողմից հավանություն ստանալու դեպքում Քարտուղարությունը կարող է նշանակել արտաքին աուդիտոր՝ ՄԱԴ-ի հաշիվներն ուսումնասիրելու համար:

Հոդված VII

Անդամ պետության կարգավիճակը

1. Անդամակցությունը բաց է Միավորված ազգերի կազմակերպության անդամ հանդիսացող պետությունների համար: Այդպիսի պետությունները դառնում են ՄԱԴ-ի անդամներ՝ սույն Համաձայնագիրը ստորագրելու եւ վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու միջոցով:

Հոդված VIII

Գործընկեր կազմակերպությունը

1. Ժողովը կարող է Գործընկեր կազմակերպության կարգավիճակ շնորհել այն կազմակերպություններին, որոնք ունեն ներուժ՝ օգնելու ՄԱԴ-ին հասնել իր նպատակներին, ներառյալ՝ տարածաշրջանային միջկառավարական տնտեսական ինտեգրման կազմակերպությունները, որոնք կազմված են ինքնիշխան պետություններից, եւ որոնցից առնվազն մեկը ՄԱԴ-ի անդամ է:

2. Գործընկերությունների վերաբերյալ որոշումները, որոնք պետք է կնքվեն կոնկրետ Ծրագրի համատեքստում, ընդունվում են սույն Ծրագրին մասնակից երկրների կողմից՝ Քարտուղարության հաստատմամբ:

3. Միավորված ազգերի կազմակերպությունը, ներառյալ՝ նրա մարմինները, կլինեն ՄԱԴ-ի ռազմավարական գործընկերը:

Հոդված IX

Դիտորդները

Դիտորդի կարգավիճակ, որը ժողովը կարող է շնորհել անդամակցության համար դիմած կազմակերպություններին, որոնց դիմումն առկախ է, կամ ցանկացած այլ կազմակերպության, որը կարող է սատարել ՄԱԴ-ի շահերն ու նպատակները:

Հոդված X

ՄԱԴ-ի կարգավիճակը, արտոնությունները եւ անձեռնմխելիությունը

1. Ընդունող երկրի համաձայնագրի համաձայն՝ ՄԱԴ-ի Քարտուղարությունն ունի իրավասություններ, պայմանագրեր կնքելու, շարժական եւ անշարժ գույք ձեռք բերելու եւ տնօրինելու, ինչպես նաեւ դատական վարույթ հարուցելու կարողություն:

2. Նույն Ընդունող երկրի համաձայնագրի համաձայն՝ ՄԱԴ-ի Քարտուղարությունն օգտվում է այնպիսի արտոնություններից, կիրառելի հարկային արտոնություններից եւ անձեռնմխելիությունից, որոնք անհրաժեշտ են նրա Գլխամասային գրասենյակում ժողովի կողմից հաստատված իր գործառույթներն ու ծրագրերն ինքնուրույն իրականացնելու համար:

3. Յուրաքանչյուր Անդամի տարածքում, նրա ազգային օրենքներին համապատասխան եւ անհրաժեշտության դեպքում առանձին Համաձայնագրի

համաձայն, ՄԱԴ-ի Քարտուղարությունը կարող է օգտվել այնպիսի անձեռնմխելիությունից եւ արտոնություններից, որոնք անհրաժեշտ են նրա գործառույթներն ու ծրագրերն ինքնուրույն իրականացնելու համար:

Հոդված XI

Փոփոխությունները եւ Համաձայնագրից դուրս գալը

1. Ցանկացած Անդամ կարող է առաջարկել փոփոխություններ կատարել Շրջանակային համաձայնագրում՝ Շրջանակային համաձայնագրի մեկնարկից մեկ տարին լրանալուց հետո:

2. Շրջանակային համաձայնագրի փոփոխություններն ընդունվում են Ժողովի կողմից՝ ներկա եւ քվեարկող անդամների երկու երրորդի մեծամասնությամբ: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում այն ժամանակ, երբ անդամների երկու երրորդն ընդունում է այդ փոփոխությունները՝ իրենց համապատասխան սահմանադրական գործընթացներին համապատասխան:

3. Ցանկացած անդամ կարող է դուրս գալ սույն Շրջանակային համաձայնագրից՝ երեք ամսվա ընթացքում նախապես այդ մասին Ավանդապահին ծանուցելու միջոցով: Ավանդապահը Համաձայնագրից դուրս գալու մասին այդպիսի ծանուցման մասին ծանուցում է մյուս Անդամներին:

Հոդված XII

ՄԱԴ-ի նստավայրը

ՄԱԴ-ի նստավայրը Հնդկաստանն է:

Հոդված XIII

Ստորագրումը եւ ուժի մեջ մտնելը

1. Շրջանակային համաձայնագրի վավերացումը, ընդունումը կամ հաստատումն իրականացվում է պետությունների կողմից՝ իրենց համապատասխան սահմանադրական գործընթացներին համապատասխան: Սույն Շրջանակային համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման տասնհինգերորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո երեսուներորդ օրը:

2. Շրջանակային համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթուղթ ի պահ հանձնած Անդամների համար սույն Շրջանակային համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո երեսուներորդ օրը:

3. ՄԱԴ-ի հիմնադրումից հետո ՄԱԴ-ի Միջազգային ղեկավար կոմիտեն դադարում է գոյություն ունենալ:

Հոդված XIV

Տեքստն ի պահ հանձնելը, գրանցելը, վավերացնելը

1. Հնդկաստանի Հանրապետության կառավարությունը Շրջանակային համաձայնագրի Ավանդապահն է:

2. Սույն Շրջանակային համաձայնագիրը գրանցված է Ավանդապահի կողմից՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածի:

3. Ավանդապահը Շրջանակային համաձայնագրի վավերացված պատճենները փոխանցում է բոլոր Կողմերին:

4. Սույն Շրջանակային համաձայնագիրը, որի հնդկերեն, անգլերեն եւ ֆրանսերեն տեքստերը հավասարապես նույնական են, հանձնվում է Ավանդապահի արխիվներ՝ պահատվության:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, դրա համար պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին Շրջանակային համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Երեւանում 2023 թվականի նոյեմբերի 16-ին, յուրաքանչյուրը՝ անգլերեն, հնդկերեն եւ ֆրանսերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Ստորագրություն՝

ստորագրություն

Ստորագրող կողմի անունը՝

Մնացական Սաֆարյան

Պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի փոխնախարար

Երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023 թվականի նոյեմբերի 16-ին ստորագրված «Միջազգային արեային դաշինքի (ՄԱԴ) հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

**Framework Agreement on the establishment of the
International Solar Alliance (ISA)**

We, the Parties to this Agreement,

Recalling the Paris Declaration on the International Solar Alliance of 30th November 2015 and the shared ambition to undertake joint efforts required to reduce the cost of finance and the cost of technology, mobilize more than US \$ 1000 billion of investments needed by 2030 for massive deployment of solar energy, and pave the way for future technologies adapted to the needs,

Recognizing that solar energy provides countries with an unprecedented opportunity to bring prosperity, energy security and sustainable development to their peoples,

Acknowledging the specific and common obstacles that still stand in the way of rapid and massive scale-up of solar energy in these countries,

Affirming that these obstacles can be addressed if solar resource rich countries act in a coordinated manner, with strong political impulse and resolve, and that better harmonizing and aggregating the demand for inter alia solar finance, technologies, innovation or capacity building, across countries, will provide a strong lever to lower costs, increase quality, and bring reliable and affordable solar energy within the reach of all,

United in their desire to establish an effective mechanism of coordination and decision-making among them,

Have agreed as follows:

Article I Objective

Parties hereby establish an International Solar Alliance (hereinafter referred to as the ISA), through which they will collectively address key common challenges to the scaling up of solar energy in line with their needs.

Article II Guiding Principles

1. Members take coordinated actions through Programmes and activities launched on a voluntary basis, aimed at better harmonizing and aggregating demand for, inter alia, solar finance, solar technologies, innovation, research and development, and capacity building.
2. In this endeavor, Members cooperate closely and strive for establishing mutually beneficial relationships with relevant organizations, public and private stakeholders, and with non-member countries.
3. Each Member shares and updates, for those solar applications for which it seeks the benefits of collective action under the ISA, and based on a common analytical mapping of solar applications, relevant information regarding: its needs and objectives; domestic measures and initiatives taken or intended to be taken in order to achieve these objectives; obstacles along the value chain and dissemination process. The Secretariat maintains a

database of these assessments in order to highlight the potential for cooperation.

4. Each Member designates a National Focal Point for the ISA. National Focal Points constitute a permanent network of correspondents of the ISA in Member countries. They inter alia interact with one another and also with relevant stakeholders to identify areas of common interest, design Programmes proposals and make recommendations to the Secretariat regarding the implementation of the objectives of the ISA.

Article III Programmes and other activities

1. A Programme of the ISA consists of a set of actions, projects and activities to be taken in a coordinated manner by Members, with the assistance of the Secretariat, in furtherance of the objective and guiding principles described in article I and II. Programmes are designed in a way to ensure maximum scale effect and participation of the largest possible number of Members. They include simple, measurable, mobilizing targets.

2. Programme proposals are designed through open consultations among all National Focal Points, with the assistance of the Secretariat, and based on information shared by Members. A Programme can be proposed by any two Members or group of Members, or by the Secretariat. The Secretariat ensures coherence among all ISA Programmes.

3. Programme proposals are circulated by the Secretariat to the Assembly by digital circulation, through the network of National Focal Points. A Programme proposal is deemed open to adhesion by Members willing to join if it is supported by at least two Members and if objections are not raised by more than two countries.

4. A Programme proposal is formally endorsed by Members willing to join, through a joint declaration. All decisions regarding the implementation of the Programme are taken by Members participating in the Programme. They are carried out, with the guidance and assistance of the Secretariat, by country Representatives designated by each Member.

5. The annual work plan gives an overview of the Programmes, and other activities of the ISA. It is presented by the Secretariat to the Assembly, which ensures that all Programmes and activities of the annual work plan are within the overall objective of the ISA.

Article IV Assembly

1. The Parties hereby establish an Assembly, on which each Member is represented, to make decisions concerning the implementation of this Agreement and coordinated actions to be taken to achieve its objective. The Assembly meets annually at the Ministerial level at the seat of the ISA. The Assembly may also meet under special circumstances.

2. Break-out sessions of the Assembly are held in order to take stock of the Programmes at Ministerial level and make decisions regarding their further implementation, in furtherance of article III.4.

3. The Assembly assesses the aggregate effect of the Programmes and other activities under the ISA, in particular in terms of deployment of solar energy, performance, reliability, as well as cost and scale of finance. Based on this assessment, Members take all necessary decisions regarding the further implementation of the objective of the ISA.
4. The Assembly makes all necessary decisions regarding the functioning of the ISA, including the selection of the Director General and approval of the operating budget.
5. Each Member has one vote in the Assembly. Observers and Partner organizations may participate without having right to vote. Decisions on questions of procedure are taken by a simple majority of the Members present and voting. Decisions on matters of substance are taken by two-third majority of the Members present and voting. Decisions regarding specific Programmes are taken by Members participating in this Programme.
6. All decisions taken by the International Steering Committee of the ISA established by the Paris Declaration on the ISA of 30th November 2015 are submitted to the Assembly for adoption at its first meeting.

Article V **Secretariat**

1. Parties hereby establish a Secretariat to assist them in their collective work under this Agreement. The Secretariat comprises of a Director General, who is the Chief Executive Officer, and other staff as may be required.
2. The Director General is selected by and responsible to the Assembly, for a term of four years, renewable for one further term.
3. The Director General is responsible to the Assembly for the appointment of the staff as well as the organization and functioning of the Secretariat, and also for resource mobilization.
4. The Secretariat prepares matters for Assembly action and carries out decisions entrusted to it by the Assembly. It ensures that appropriate steps are taken to follow up Assembly decisions and to co-ordinate the actions of Members in the implementation of such decisions. The Secretariat, inter alia, shall:
 - a) assist the National Focal Points in preparing the Programmes proposals and recommendations submitted to the Assembly;
 - b) provide guidance and support to Members in the implementation of each Programme, including for the raising of funds;
 - c) act on behalf of the Assembly, or on behalf of a group of Members participating in a particular Programme, when so requested by them; and in particular establishes contacts with relevant stakeholders;
 - d) set and operate all means of communication, instruments and cross-cutting activities required for the functioning of the ISA and its Programmes, as approved by the Assembly.

Article VI
Budget and Financial Resources

1. Operating costs of the Secretariat and Assembly, and all costs related to support functions and cross-cutting activities, form the budget of the ISA. They are covered by:
 - a) Voluntary contributions by its Members, UN & its agencies and other countries;
 - b) Voluntary contributions from private sector. In case of a possible conflict of interest, the Secretariat refers the matter to the Assembly for approval of the acceptance of the contribution;
 - c) Revenue to be generated from specific activities approved by the Assembly.
2. The Secretariat will make proposals before the Assembly to establish and enhance a Corpus Fund which will generate revenues for the budget of the ISA, with initial donation of US \$16 million.
3. Government of India will contribute US \$ 27 million to the ISA for creating corpus, building infrastructure and recurring expenditure over 5 year duration from 2016-17 to 2020-21. In addition, public sector undertakings of the Government of India namely Solar Energy Corporation of India (SECI) and Indian Renewable Energy Development Agency (IREDA) have made a contribution of US \$ 1 million each for creating the ISA corpus fund.
4. Financial resources required for the implementation of a specific Programme, other than administrative costs falling under the general budget, are assessed and mobilized by countries participating in this Programme, with the support and assistance of the Secretariat.
5. The finance and administration activities of the ISA other than Programmes may be outsourced to another organization, in accordance with a separate agreement to be approved by the Assembly.
6. The Secretariat with the approval of the Assembly may appoint an external auditor to examine the accounts of the ISA.

Article VII
Member Country status

1. Membership is open to States which are members of the United Nations. Such States become Members of the ISA by having signed this Agreement and having deposited an instrument of ratification, acceptance or approval.

Article VIII
Partner Organization

1. Partner Organization status may be granted by the Assembly to organizations that have potential to help the ISA to achieve its objectives, including regional inter-governmental economic integration organizations constituted by sovereign States and at least one of which is a member of ISA.

2. Decisions regarding partnerships to be concluded in the context of a specific Programme are taken by countries participating in this Programme, with the approval of the Secretariat.
3. United Nations including its organs will be the Strategic Partner of the ISA.

Article IX Observers

Observer status that may be granted by the Assembly to applicants for membership whose application is pending, or to any other organization which can further the interest and objectives of the ISA.

Article X Status, privileges and immunities of the ISA

1. The ISA Secretariat shall possess juridical personality under the Host Country Agreement, the capacity to contract, to acquire and dispose of movable and immovable properties and to institute legal proceedings.
2. Under the same Host Country Agreement, the ISA Secretariat shall enjoy such privileges, applicable tax concessions and immunities as are necessary at its Headquarters for independent discharge of its functions and programmes, approved by the Assembly.
3. Under the territory of each Member, subject to its National Laws and in accordance with a separate Agreement, if necessary; the ISA Secretariat may enjoy such immunity and privileges that are necessary for the independent discharge of its functions and programmes.

Article XI Amendments and withdrawal

1. Any Member may propose amendments to the Framework Agreement after expiry of one year from the commencement of the Framework Agreement.
2. Amendments to the Framework Agreement shall be adopted by the Assembly by two thirds majority of the Members present and voting. The amendments shall come into force when two thirds of the Members convey acceptance in accordance with their respective constitutional processes.
3. Any member may withdraw from the present Framework Agreement, by giving a notice of three months to the Depository in advance. Notice of such withdrawal are notified to the other Members by the Depository.

Article XII Seat of the ISA

The seat of the ISA shall be in India.

Article XIII
Signature and entry into force

1. Ratification, acceptance or approval of the Framework Agreement is effected by States in accordance with their respective constitutional processes. This Framework Agreement shall enter into force on the thirtieth day after the date of deposit of the fifteenth instrument of ratification, acceptance or approval.
2. For Members having deposited an instrument of ratification, acceptance or approval after the entry into force of the Framework Agreement, this Framework Agreement shall enter into force on the thirtieth day after the date of deposit of the relevant instrument.
3. Once the ISA is established, the International Steering Committee of the ISA ceases to exist.

Article XIV
Depositary, registration, authentication of the text

1. The Government of the Republic of India is the Depositary of the Framework Agreement.
2. This Framework Agreement is registered by the Depositary pursuant to Article 102 of the Charter of the United Nations.
3. The Depositary transmits certified copies of the Framework Agreement to all Parties.
4. This Framework Agreement, of which Hindi, English and French texts are equally authentic, is deposited in the archives of the Depositary.

IN WITNESS WHEREOF the undersigned, being duly authorized thereto, have signed the Framework Agreement.

DONE in Yerevan, on November 16, 2023, each in Hindi, English and French languages, all texts being equally authentic.

Signature: _____




Name of Signatory: Mnatsakan Safaryan

Designation: Deputy Minister of Foreign Affairs of the Republic of Armenia

Country: Republic of Armenia

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023 թվականի նոյեմբերի 16-ին ստորագրված «Միջազգային արեւային դաշինքի (ՄԱԴ) հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագրի՝ ավանդապահի կողմից հաստատված օրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ**



S. Stepanyan
Նելլի Սարոյան